ՀՏԴ 72.012.72

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԻԶԱՅՆ

Լ.Լ.Ումեդյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ի հայտ են բերված աշխարհի զարգացած երկրների նշանակալի քաղաքների հանրային բաց տարածքների ճարտարապետական դիզայնի գործառույթները: Դիտարկված են պատմականորեն ձևավորված և վերջին տասնամյակում նախագծված հանրային բաց տարածքները: Համեմատական վերլուծությունների միջոցով բացահայտված են վերջինների ներկա վիճակը, ձևավորման նախադրյալները և գործառույթները: Դուրս է բերված յուրաքանչյուր դիտարկված օրինակի համար առավել նշանակալի գործառույթներն արտահայտող դիագրամ: Տրված է հանրային բաց տարածքների ճարտարապետական դիզայնի գործառույթների փոխկապակցվածությունն արտահայտող սխեմա:

Առանցքային բառեր. *հանրային բաց տարածք, ճարտարապետական դիզայն, գործառույթ, ժամանակակից, պատմականորեն ձևավորված, այգի, հրապարակ*

Ներկայումս աշխարհի քաղաքներում ավելի ու ավելի մեծ դեր ու նշանակություն են ձեռք բերում հանրային բաց տարածքները: Դրան նպաստում են մի շարք հանգամանքներ, ինչպես օրինակ քաղաքային լանդշաֆտի արդիականացումը, բնակչության աճն ու բազմազանությունը (ժողովրդագրական աճ, պատերազմներ, սոցիալական անբավարար վիճակ), զբոսաշրջությունը: Քաղաքները զբաղեցնում են Երկրի մակերևույթի ընդամենը 3%-ը, սակայն աշխարհի բնակչության կեսը, որը կազմում է 3,5 *մլրդ* մարդ, այժմ բնակվում է քաղաքներում: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի կայուն զարգացման ծրագրում տեղ գտած 11-րդ դրույթը վերաբերվում է քաղաքներում և համայնքներում կայուն զարգացմանը նպաստող կանաչ միջավայրի և հանրային տարածքների ապահովմանն ու խթանմանը [1]:

Հանրային բաց տարածքները քաղաքային միջավայրի կայուն զարգացմանը նպաստող օղակներ են, որոնք կարող են լուծել քաղաքաշինական, սոցիալ-մշակութային և տնտեսական խնդիրներ՝ միաժամանակ նպաստելով շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը:

Անհրաժեշտ է նշել, որ հանրային բաց տարածքները, որպես քաղաքների բաղկացուցիչ մաս, առկա են եղել դեռևս Հին Հունաստանում և Հռոմում: Հին Հունաստանում դա այսպես կոչված «ագորա»-ն էր, իսկ Հռոմում՝ «ֆորումը»: Հունական ագորան նախնական շրջանում (մ.թ.ա.18-ից 8-րդ դարեր) ծառայում էր որպես ազատ քաղաքացիների զինվորագրման և իշխանի/թագավորի հրամանները լսելու վայր: Ավելի ուշ այն վերածվեց շուկայի՝ գրավելով արհեստավորներին, որոնք էլ տեղում հիմնում էին իրենց արհեստագործական խանութները [2]: Հռոմեական ֆորումն առավելապես քաղաքական հանդիպումների, հռետորության, քաղաքացիական քննարկումների վայր էր: Այն տեղակայված էր քաղաքի կենտրոնական հատվածում՝ շրջապատված

հասարակական նշանակության տարբեր շենքերով (տաճար, դատարան, բաղնիք, թատրոն) [3]: Հույներն ու հռոմեացիները կարևորելով հանրային կյանքը մեծ ուշադրություն էին դարձնում նման տարածքներին. նրանք առաջինը սկսեցին հարթել և ուղղել փողոցները՝ տեսանելի և ապահով դարձնելով իրենց հանրային վայրերը [4]:

Այսօր հանրային բաց տարածքների խնդիրն առավել խորությամբ է դիտարկվում հատկապես զարգացած երկրներում: Դիտարկենք նման երկրների նշանակալի քաղաքներում հանրային բաց տարածքների օրինակներ:

«Սուպերկիլեն» հանրային այգի

Սուպերկիլեն հանրային այգին գտնվում է Նյորեբրո շրջանում (ք.Կոպենհագեն, Դանիա), բացման տարեթիվը՝ 2012թ., զբաղեցրած մակերեսը՝ 30000$մ^2$, հեղինակ-նախագծողներ՝ Superflex, Bjarke Ingels Group և Topotek1: Այգին նպաստում է քաղաքում հետիոտնային գոտու ընդարձակմանը և ավտոճանապարհների կրճատմանը՝ հեծանվային ուղիների ավելացմամբ, նաև ապահովում է տեղի բազմազգ բնակչության համերաշխ համակեցությունը: Սուպերկիլեն այգին իր շուրջ է միավորում ք.Կոպենհագենում ապրող ավելի քան 60 ազգերի ներկայացուցիչներին՝ յուրահատուկ ճարտարապետական դիզայնի շնորհիվ, որը ներառում է տարբեր մշակույթների խորհրդանիշների ներկայությունը մեկ տարածքում: Նախագծման ընթացքում, այգում տեղադրվելու նպատակով հավաքագրվել են տարբեր մշակույթներում կիրառությամբ հայտնի ճարտարապետական դիզայնի օբյեկտներ. նստարաններ, աղբամաններ, դիտահորի կափարիչներ, խաղահրապարակներ, ցուցանակներ, ծառեր: Դրանք կամ նախագծվել են, ընդօրինակելով բնօրինակը 1:1 մասշտաբով, կամ ներկրվել են համապատասխան երկրից: 30000$մ^2$ մակերես զբաղեցնող այգին բաժանված է երեք մասի, որոնցից յուրաքանչուրը («Կարմիր հրապարակ», «Սև շուկա» և «Կանաչ զբոսայգի») «հանրային բաց տարածք» հասկացության հիմնական ձևերից մեկն է [5]: Նպատակային էր նաև այգու տեղանքի ընտրությունը. Սուպերկիլենը տեղակայված է ք.Կոպենհագենի Նյորեբրո շրջանում, որը դեռևս 19-րդ դարի կեսերից բնակեցվում էր այլազգի ներկայացուցիչներով, առանձնանում է քաղաքում բազմազգ բնակչության ամենամեծ քանակով: Ըստ 2011թ. վիճակագրական տվյալների, այստեղի բնակչության 27,6%-ը ներգաղթածներ կամ ներգաղթածների սերունդներ են: Հատկանշական է, որ այգու տարածքը նախկինում բազմաթիվ ցույցերի և զինված բախումների վայր է եղել: Քաղաքի այդ հատվածում հանրային այգու կառուցումն առաջին հերթին միջավայրաստեղծ մեծ դեր ունեցավ Նյորեբրո շրջանի համար [6]: Սուպերկիլենը ժամանակակից քաղաքում սոցիալ-մշակութային կյանքը խթանող և էկոլոգիական միջավայրի կայացմանը նպաստող հանրային բաց տարածքի օրինակ է (նկ.1):



ա բ գ

Նկ. 1. Սուպերկիլեն հանրային այգին Կոպենհագենում.
ա - գլխավոր հատակագիծը, բ - «Կարմիր հրապարակ»-ը, գ - հատված «Մև շուկա»-ից

«Հայ Լայն» հանրային այգի

«Հայ լայն» հանրային այգին գտնվում է Մանհեթենում (ք.Նյու Յորք, ԱՄՆ), բացման տարեթիվը՝ 2009թ., զբաղեցրած մակերեսը՝ 70000 *մ²*, հեղինակ-նախագծողներ՝ Ջեյմս Քորներ Ֆիլդ Օփերեյշնզ, Դիլլեր Սկոֆիդիո, Փիթ Օդոլֆ: Այս այգին բաց տարածքի վերակառուցման օրինակ է: Այն կառուցվել է ք. Նյու Յորքի կենտրոնական երկաթգծի բարձրացված հատվածի հիմքի վրա: 1934թ. գործող և Մանհեթենի թաղամասերը միմյանց կապող երկաթգիծը շահագործումից դուրս եկավ 1980-ականներից և ենթակա էր ապամոնտաժման, սակայն տեղի ակտիվիստական ուժերի շնորհիվ այդ գործընթացը կասեցվեց: 1999թ. «Հայ լայնի ընկերներ» անունով ֆոնդի կողմից գործընթաց սկսվեց, որն ուղղված էր «Հայ լայնին» հանրային բաց տարածքի կարգավիճակ տալուն: 2009թ. բացվեց Հայ լայն հանրային այգու առաջին, 2011թ.՝ երկրորդ, 2014թ.՝ երրորդ հատվածը: Հայ լայնը քաղաքաշինական իրավիճակի բարելավման օրինակ է: Այն 2,33 *կմ* երկարությամբ ձգվում է քաղաքի Ուեսթ սայդ թաղամասի երկայնքով՝ միմյանց կապելով դրա փողոցները: Այգու ճարտարապետական դիզայնն ուղղված է նաև վերակառուցված երկաթգծին էկոլոգիական գործառույթ տալուն: Այստեղ օգտագործված բույսերի հիմնական մասը հենց երկաթգծի տեղում աճած տեսակներն են, նաև վերաօգտագործվել են նախկին երկաթգծի երկաթե և բետոնե կոնստրուկցիաները: Ըստ 2014թ. տվյալի, այգին տարեկան 5 *մլն* այցելու ունի [7]: «Հայ լայնը» բազմաթիվ գործառույթներ միավորող հանրային բաց տարածքի օրինակ է:

«Մետրոպոլ Պարասոլ»

Մետրոպոլ Պարասոլը գտնվում է ք.Սևիլիայում (Իսպանիա), բացման տարեթիվը՝ 2011 թ., զբաղեցրած մակերեսը՝ 10500 *մ²*, հեղինակ-նախագծող՝ Յուրգեն Մայեր: Ժամանակակից հանրային բաց տարածքի օրինակ է Իսպանիայի Սևիլիա քաղաքում 2011թ. կառուցված Մետրոպոլ Պարասոլը: Վերջինս քաղաքի կենտրոնը վերափոխեց՝ նախորդող տարիներին ամայացած կենտրոնական հրապարակը՝ Plaza de la Encarnación-ը, նորից դարձնելով այն սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող բանուկ հատված: Հրապարակի և, մասնավորապես, Մետրոպոլ Պարասոլի տեղում եղած կառույցը՝ Mercado de la Encarnación

անունով կենտրոնական շուկան, գործում էր դեռևս 19-րդ դարից: Այն ապահովում էր քաղաքի բնակիչներին ք.Սևիլիայի շրջակա գյուղերից բերված գյուղմթերքով, իսկ ֆերմերների համար՝ սոցիալ-տնտեսական կարիքները բավարարող միավոր էր: Քաղաքի բարեկարգման նպատակով ընդունված որոշմամբ 1948թ. շուկայի շենքը քանդվեց, սակայն շուկան շարունակեց գործել մինչև 1973թ.: 1990թ. քաղաքային իշխանությունները որոշում կայացրին, ստորգետնյա ավտոկայանատեղի և շուկա կառուցել այս հրապարակի տարածքում, սակայն հողի տակ հայտնաբերված Հռոմեական Կայսրության շրջանին պատկանող հնագիտական գտածոները շինարարությունը կանգնեցնելու պատճառ հանդիսացան: 2004թ. որոշում ընդունվեց ք.Սևիլիայի այս կարևոր հատվածը վերածնելու մասին և համապատասխան նախագծերի մրցույթ հայտարարվեց: Ճարտարապետ Յուրգեն Մայերի նախագիծը 26 *մ* բարձրություն և 150x70 *մ²* ընդհանուր մակերես ունեցող փայտյա, հսկայական հովանոցներ (Parasol, իսպ.՝ հովանոց) հիշեցնող կոնստրուկցիա է: 2011թ. բացված Մետրոպոլ Պարասոլն աշխարհի ամենամեծ փայտյա շինություններից մեկն է [8]: Այն ունի 4 մակարդակ. առաջինը ստորգետնյա հատվածն է, որ ներառում է Հռոմեական շրջանի գտածոներով թանգարանը, երկրորդը հանրային բաց տարածքն է, որը հրապարակ է, երրորդ և չորրորդ մակարդակները տերասսային հարթակներ են՝ ռեստորաններ և դիտակետ ներառող: Մետրոպոլ Պարասոլը քաղաքաշինական իրավիճակի բարելավման և տվյալ քաղաքի համար տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքը խթանող հանրային բաց տարածքի օրինակ է:

«Չեոնգիչեոն» այգի

Չեոնգիչեոնը գտնվում է ք.Սեուլում (Հարավային Կորեա), բացման տարեթիվը՝ 2005 թ., զբաղեցրած մակերեսը՝ 91000 *մ²* : Այգին քաղաքի վերափոխման և միջավայրի բարելավման օրինակ է, որը քաղաքի կենտրոնով անցնող Չեոնգայ ջրանցքի և մայրուղու հատվածի վերականգնումը և բարեկարգումն է: Այն կանաչ միջանցք է՝ տեղակայված ք.Սեուլի կենտրոնական հատվածում: 91000 *մ²* մակերես ունեցող այգին օրգանական կերպով շարունակվում է Կորեայի 8 շրջանները խորհրդանշող 8 տեսակի քարե սալերից բաղկացած ջրանցքի հատվածի լուծմամբ: Այն նախագծված է այնպես, որ անգամ ջրի մակարդակի բարձրացման պարագայում այգու մի որոշակի հատված մնում է օգտագործման համար հասանելի: Հատկանշական է, որ այգին դարձել է քաղաքաբնակների և զբոսաշրջիկների սիրելի հանգստի և ժամանցի վայրը ք.Սեուլում: 2005թ. բացումից հետո Չեոնգիչեոն այգին ունեցել է 10 *մլն* այցելու [9]: «Չեոնգիչեոն» այգին լուծում է ք.Սեուլի տվյալ հատվածի քաղաքաշինական, տնտեսական և էկոլոգիական խնդիրները:

«Պիացա Նավոնա» հրապարակ

Պիացա Նավոնան գտնվում է ք.Հռոմում (Իտալիա), հիմնադրման տարեթիվը՝ մ.թ. 86թ., զբաղեցրած մակերեսը՝ ~11000 *մ²*: Ի տարբերություն Սուպերկիլենի, Մետրոպոլ Պարասոլի և Չեոնգիչեոնի Հռոմի Պիացա Նավոնան պատմական մեծ ճանապարհ անցած հանրային բաց տարածք է: Հատկանշականն այն է, որ այն իր ներկա կերպարանքը ստացել է 17-րդ դարի

երկրորդ կեսին, սակայն ի սկզբանե եղել է հանրային նշանակության տարածք: Այս վայրը պահպանել է այդ կարգավիճակն անկախ ժամանակների, կառավարման համակարգերի և հասարակության պահանջմունքների փոփոխությունից: Պիացա Նավոնան գտնվում է Դոմիցիանոսի ստադիոնի տեղում, որը կառուցվել է մ.թ. 86 թ. ՝ Մարսյան դաշտերի (Campus Martius) տարածքում: Այն նախատեսված էր զորավարժությունների և տարատեսակ մրցությունների համար, իսկ 217թ. Կոլիզեումի հրդեհից հետո ծառայում էր նաև որպես գլադիատորական մարտերի անցկացման վայր [10]: Բոլոր հանդիսությունները, սկսած տարատեսակ խաղերից, վերջացրած Դոմիցիանոսի ստադիոնի պարագծով տեղակայված առևտրական կետերից և հասարակաց տներից, ծառայում էին հասարակության լայն շերտերին, ինչն այս վայրը հստակ բնորոշում է որպես հանրային բաց տարածք: Դաշտային ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ Պիացա Նավոնան ք.Հռոմի այն հանրային բաց տարածքներից է, որն այսօր էլ ապահովում է գործառույթների բամազանություն. մարդիկ նստում են հրապարակի պարագծով տեղադրված քարե նստարաններին կամ շատրվանների մետաղական ցանկապատի վրա, լսում են փողոցային երաժիշտներին, դիտում հրապարակի մեջ վաճառվող գեղանկարները (նկ.2ա.): Մյուս գործառույթների հետ մեկտեղ Պիացա Նավոնան որպես հանրային բաց տարածք նպաստում է պատմաճարտարապետական ժառանգության պահպանմանը:

«Պիացա դել Կամպո» հրապարակ

«Պիացա դել Կամպո» կենտրոնական հրապարակը գտնվում է ք.Սիենայում (Իտալիա), հիմնադրման տարեթիվը՝ 14-րդ դար, զբաղեցրած մակերեսը՝ ~6500 *մ²*: Որպես նման օրինակ Պիացա դել Կամպոյին զուգահեռ դիտարկենք նաև Ֆլորենցիայի Պալացցո Պիտիի առջևի հրապարակը: Ինչպես և Պիացա Նավոնան, վերը նշված երկու հրապարակները նույնպես պատմաճարտարապետական մեծ նշանակություն ունեն և միևնույն ժամանակ կիրառելի են որպես հանրային բաց տարածք: Պիացա դել Կամպոն գտնվում է ք.Սիենայի կենտրոնում: Միջնադարյան հստակ դիմագիծ ունեցող ք.Սիենայի կենտրոնական հրապարակը կարմիր աղյուսից է: Այն քաղաքի գլխավոր հանրային վայրն է 14-րդ դարից մինչ այժմ: Դաշտային ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ այս թեք մակերեսը գրավում է թե քաղաքաբնակներին, թե զբոսաշրջիկներին: Հրապարակում նստած/պառկած մարդիկ հիանում են տեսարանով, սնվում են և զրուցում: Այստեղ կարևոր հանգամանք է հրապարակի մակերևույթը կազմող աղյուսը, քանի որ լավ ջերմընդունիչ է, արևի առկայության պարագայում ապահովելով նստելու համար հարմարավետ և հաճելի մակերևույթ: Կարևոր է նաև հրապարակի մակերևույթի թեքությունը՝ տեսադաշտի ապահովմամբ նստածների համար (նկ.2 բ.):

ա բ

Նկ. 2. Պատմականորեն ձևավորված հանրային բաց տարածքներ. ա - ք.Հռոմի Պիացա Նավոնա հրապարակը, բ - ք.Սիենայի Պիացա Դել Կամպո հրապարակի թեք մակերևույթը

Պիացա Դել Կամպոյի և Պալացցո Պիտիի հրապարակները մի ընդհանրություն ունեն. երկուսի մակերևույթն էլ թեքություն ունի: Երկու դեպքում էլ տեսանելի կերպով աշխատում է Դե Յոնգի՝ Յան Գելի մեջբերած «եզրի» կանոնը, որը բացատրում է հանրային վայրերում մարդկանց առավել մեծ տեսադաշտ ունեցող հատվածին նախընտրությունը տալը [11]: Այս երկու վայրերում էլ համատեղվում են նստելու, պառկելու և լսելու գործառույթները: Հատկանշական է, որ ամռանը ֆլորենտացիների սիրելի հանրային զբաղմունք է դառնում Պալացցո Պիտիի հրապարակում պառկելն ու արևի լոգանք ընդունելը, մինչդեռ զբոսաշրջիկների համար առաջնահերթությունը տրվում է Պալացցոյի ներսում ցուցադրվող արվեստի գլուխգործոցներին ծանոթանալուն: Այսպիսով, Պալացցո Պիտիի առջևի թեք հրապարակն օգտագործվում է առավելապես քաղաքաբնակների կողմից:

Ք.Ֆլորենցիայի հանրահայտ Պիացալե Միքելանջելոյին հարող աստիճանները և հարթակը ևս հանրային բաց տարածքի օրինակ է: Այստեղ առանցքային կարևոր է աստիճաններից բացվող քաղաքի համայնապատկերը, որն ինքնաբերաբար դառնում է վայրի գլխավոր զվարճադաշտը: Քաղաքի ևս մեկ, սակայն ոչ հայտնի և փոքր հանրային բաց տարածքի օրինակ է Ուֆֆիցի թանգարանի ելքի մոտ գտնվող փոքր բաց տարածքը: Այս վայրի գլխավոր գործառական առանձնահատկությունը թանգարանում երկար ժամանակ անցկացրած և ֆիզիկապես հոգնած այցելուներին թանգարանից դուրս գալուց հետո նստելու, հանգստանալու հնարավորություն ընձեռելն է: Մոտ 70 *մ²* մակերես զբաղեցնող տարածքում տեղադրված են ժամանակակից փայտե նստարաններ: Վերջին երկու հանրային բաց տարածքները կատարում են ինչպես պատմաճարտարապետական ժառանգության պահպանման, այնպես էլ սոցիալ-մշակութային կյանքի ապահովման և զբոսաշրջության խթանման գործառույթ:

Այս օրինակները փաստում են, որ նույնիսկ պատմամշակութային մեծ ժառանգություն ունեցող քաղաքներում հայտնի հանրային վայրերի կողքին այլ տիպի, երկընտրանքային գործառույթ կրող հանրային բաց տարածքների կարիք ևս կա: Ամփոփելով հանրային բաց տարածքների բոլոր օրինակները՝ կարելի է դուրս բերել դրանց կողմից խթանվող գործառույթները (նկ.3):



Նկ. 3. Տրված հանրային բաց տարածքների ճարտարապետական դիզայնի առավել նշանակալի գործառույթներն արտահայտող դիագրամ

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նշված բոլոր հանրային բաց տարածքների համար ընդհանուր է սոցիալ-մշակութային կյանքի ապահովում/բարելավում գործառույթը: Ի մի բերելով՝ կարելի է նշել հանրային բաց տարածքների ճարտարապետական դիզայնի գործառույթները.

- քաղաքաշինական իրավիճակի բարելավում,
- պատմաճարտարապետական ժառանգության պահպանում,
- սոցիալ-մշակութային կյանքի ապահովում/բարելավում,
- տնտեսական զարգացման խթանում,
- էկոլոգիական միջավայրի ապահովում:
- զբոսաշրջության խթանում

Տարբեր ժամանակաշրջաններին պատկանող, պատմամշակութային տարբեր շերտեր պարունակող, ինչպես նաև մեր ժամանակներում ձևավորված հանրային բաց տարածքներն ուսումնասիրելով՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ հանրային բաց տարածքներն անկախ տեսակից (այգի, հրապարակ, հետիոտնային փողոց և այլն) կարող են բաժանվել երկու խմբի. պատմականորեն ձևավորված և ներկա ժամանակում նախագծված: Պատմականորեն ձևավորված հանրային բաց տարածքները քաղաքային միջավայրի այն բաց հատվածներն են,

որոնք ձևավորվել են պատմաճարտարապետական հուշարձանի տեղում կամ դրան հարող տարածքում: Ներկա ժամանակում նախագծված հանրային բաց տարածքները քաղաքի արդի խնդիրները լուծող և կայուն զարգացման խթան հանդիսացող այն տարածքներն են, որոնք ձևավորվել են որպես քաղաքաշինական միջավայրի բարելավմանը նպաստող նոր միավորներ:

Հանրային բաց տարածքները կարող են լինել զբոսաշրջության զարգացմանը նպաստող օղակներ, ինչպես նաև լուծել քաղաքային բնակչության սոցիալ-մշակութային խնդիրները, դառնալ միջավայրի պահպանման օղակներ և քաղաքը դարձնել ապրելու համար առավել բարենպաստ վայր: Ուսումնասիրված հանրային բաց տարածքների ճարտարապետական դիզայնի գործառույթներն, անկախ վերը նշվածների ժամանակագրական ծագումից, մեկը մյուսից բխող և փոխկապակցված են (նկ.4):

Նկ. 4. Հանրային բաց տարածքի ճարտարապետական դիզայնի գործառույթների փոխկապակցվածությունն արտահայտող սխեման

Նշված օրինակների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ճարտարապետական դիզայնի շնորհիվ հանրային բաց տարածքները դառնում են քաղաքի մի շարք կարևոր և փոխկապակցված գործառութերի կրողն ու խթանիչը: Քաղաքը որպես բնակելի միավոր ամբողջանում է ոչ միայն շենքերով ու շինություններով, այլև դրանց միջև գոյացող տարածություններով, որոնք ինքնին հանրային բաց տարածքներն են՝ կազմակերպված ճարտարապետական դիզայնի էլեմենտների ամբողջությամբ:

Л.Л. Умедян

ФУНКЦИИ АРХИТЕКТУРНОГО ДИЗАЙНА ОБЩЕСТВЕННЫХ ОТКРЫТЫХ ПРОСТРАНСТВ

Выявлены функции архитектурного дизайна общественных открытых пространснств наиболее значимых городов развитых стран мира. Рассматриваются исторически сформированные и спроектированные в последнем десятилетии общественные открытые пространства. Проведен сравнительный анализ, раскрывающий сегодняшнее состояние, предпосылки их формирования и функции. Представлена диаграмма, выделяющая наиболее значимые функции для каждого из рассмотренных примеров. Дана схема, отражающая взаимосвязь функций архитектурного дизайна общественных открытых пространснств.

***Ключевые слова**: общественное открытое пространство, архитектурный дизайн, функция, современный, исторически сформированный, парк, площадь*

L.L.Umedyan

ARCHITECTURAL DESIGN FUNCTIONS OF PUBLIC OPEN SPACES

The functions of architectural design of public open spaces of the most significant cities of developed countries are defined. Public open spaces that are historically formed and designed in the last decade are considered. The comparative analysis reveals the current state, the prerequisites for their formation and function. A diagram is identified that highlights the most significant functions for each example considered. A scheme is presented reflecting the interrelation between the functions of the architectural design of public open spaces.

***Keywords:** public open space, architectural design, function, modern, historically formed, park, square*

Գրականություն

1. http://www.undp.org/content/undp/en/home/sustainable-development-goals/goal-11-sustainable-cities-and-communities/targets/.
2. **Ring T., Salkin R., Boda S.** International Dictionary of Historic Places: Southern Europe. - Routledge, 1995. - 817 p.
3. **Abbott F. F., Johnson A. C.** Municipal Administration in the Roman Empire. - Princeton: Princeton University Press, 1926. - 598 p.
4. **Carr S., Francis M., Rivlin L.G., Stone A. M.** Needs in Public Space, Public Space-Cambridge: Cambridge University Press, 1992. - 387 p.
5. So many people lent a hand to give us parklife! - January 15th, 2012. – URL: http://cphpost.dk/activities/inout-activities/so-many-people-lent-a-hand-to-give-us-parklife.html.
6. **Akšamija Azra.** Superkilen: 2016 on Site Review Report. – URL: https://archnet.org/system/publications/contents/10687/original/DTP103072.pdf?1475511766.
7. **David J., Hammond R.** High Line: The Inside Story of New York City's Park in the Sky, Farrar, Straus and Giroux. - New York, 2011. - 352 p.

8. **Karen Cilento.** Metropol Parasol / J. Mayer H + Arup. - 24 January, 2012. – URL: http://www.archdaily.com/201961/metropol-parasol-j-mayer-h-arup.
9. ChonGae Canal Restoration Project / Mikyoung Kim Design. - 7 October, 2011. – URL: http://www.archdaily.com/174242/chongae-canal-restoration-project-mikyoung-kim-design.
10. **Samuel Ball Platner.** A Topographical Dictionary of Ancient Rome. - London: Oxford University Press, 1929. - P.495-496.
11. **Gehl Jan.** Life between buildings: using public space. - Washington: Island Press, 2011. - 216 p.

Ումեդյան Լիլիթ Լևոնի *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, հայցորդ, Դիզայնի ամբիոն, դասախոս, lilitumedyan@gmail.com, (+374) 95509774*
Умедян Лилит Левоновна *(РА, г.Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, соискатель, кафедра Дизайна, преподаватель, lilitumedyan@gmail.com, (+374) 95509774*
Umedyan Lilit Levon *(RA, Yerevan) - NUACA, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History, PhD applicant,, Chair of Design, lecturer, lilitumedyan@gmail.com, (+374) 95509774*

Ներկայացվել է՝ 06.06.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 22.06.2017թ.